

**ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Մարգարյանին ներկայացվեցին  
<<Որդեգրիր մի գյուղ>> նախաձեռնության ընթացիկ աշխատանքները**

07.04.2018



2018 թվականի ապրիլի 5-ից 7-ը ՈՄԳ-ի նախաձեռնող խումբը գտնվում է Վայոց ձորի մարզում: Ինչպես նշում է նախաձեռնության հեղինակ Լեն Ուիքսը, ծրագրի նպատակը հայկական Սփյուռքը Հայրենիքի հետ վերամիավորել է, որպեսզի Հայաստանի յուրաքանչյուր համայնք Սփյուռքում ունենա իր խորհրդատուն:

Նախաձեռնության հեղինակների ջանքերով մարզում իրականացվում են 32 փոքր նախագծեր 5 տարբեր ոլորտներում՝ գյուղատնտեսություն, կրթություն, ձեռագործություն, զբոսաշրջություն և ծառայությունների մատուցում: Հատկանշականն այն է, որ նախաձեռնության հեղինակներն իրենց ծրագրերում ներգրավում են ոչ միայն տարբեր երկրների հայկական համայնքների ներկայացուցիչներին, այլև օտարերկրյա քաղաքացիներին:

Ապրիլի 5-ին ՈՄԳ-ի նախաձեռնող խումբն այցելեց Արենի համայնք: Արենի համայնքի Չիվա բնակավայրում սինգապուրյան Samuel Seow Law Corporation (Մամյուել Սեու) իրավական խորհրդատվական ընկերության ֆինանսավորմամբ համայնքի 25 երիտասարդներ մասնակցում են բատիկայի և խեցեգործության դասընթացների, որոնց տևողությունը 2 ամիս է: Նույն ընկերության ֆինանսական աջակցությամբ Չիվա և Ռինդ բնակավայրերի ճամփաբաժանի մոտ ստեղծվել է „Չիվայի ձեռագործության շուկա„: Samuel Seow Law Corporation-ի աջակցությամբ Չիվա բնակավայրում տեղադրվել են զբոսաշրջային ճանապարհային ցուցանակներ: Նշենք, որ „Որդեգրիր մի գյուղ„ նախաձեռնության հեղինակների հետ Վայոց ձորի մարզ է այցելել Մամյուել Սեուն, ով մեծ հավանության արժանացրեց դասընթացների մասնակիցների աշխատանքները:

„Որդեգրիր մի գյուղ„ նախաձեռնության հեղինակներ Լեն Ուիքսը և Արմինե Հակոբյանը Արենի համայնքի ղեկավար Հուսիկ Սահակյանի ուղեկցությամբ այցելեցին Ռինդ, Չիվա, Ելփին և Աղավնաձոր բնակավայրեր: Նշված բնակավայրերի դպրոցները ստացան անզլերեն լեզվով գրքեր և Լեն Ուիքսի հեղինակած խաղը, որը ուսուցողական նշանակություն ունի: Այս խաղի միջոցով երեխաները կարող են սովորել կամ կատարելագործել անզլերեն լեզուն, ինչպես նաև իրենց աշխարհագրական գիտելիքները: Ռինդ և Աղավնաձոր բնակավայրերին տրամադրվեցին նեթբոլ և ռեզբի խաղերի համար անհրաժեշտ սպորտային գույք, ինչպես նաև բջջային հեռախոսների լիցքավորման համար արևային մարտկոցներ, որոնք անհրաժեշտ են անասնապահությամբ զբաղվող գյուղացիներին: Աղավնաձորում իրականացվեց նաև ծառատունկ:

„Որդեգրիր մի գյուղ,» նախաձեռնության աջակցությամբ Արենիում ևս տեղադրվել են զբոսաշրջային ճանապարհային ցուցանակներ:

Ապրիլի 6-ին «Որդեգրիր մի գյուղ» նախաձեռնության հեղինակներ Լեն Ուիքսը և Արմինե Հակոբյանն այցելեցին Եղեգիս համայնք: Եղեգիս համայնքի ղեկավար Արթուր Ստեփանյանի ուղեկցությամբ այցելեցին Եղեգիս, Արտաբույնք և Քարագլուխ բնակավայրեր: Եղեգիս բնակավայրին Ավստրալիայի հայկական համայնքի աջակցությամբ տրամադրվեցին արևային մարտկոցներ և իրականացվեց պտղատու ծառերի ծառատունկ:

Քարագլուխ բնակավայրին „Որդեգրիր մի գյուղ,» նախաձեռնության հեղինակների և Ավստրալիայի հայկական համայնքի աջակցությամբ տրամադրվեցին արևային մարտկոցներ, իրականացվեց ծառատունկ, ինչպես նաև Քարագլխի դպրոցին տրամադրվեցին անգլերեն գրքեր և Լեն Ուիքսի հեղինակած խաղերից:

Արտաբույնքի միջնակարգ դպրոց կատարած այցելության ժամանակ «Որդեգրիր մի գյուղ» նախաձեռնության հեղինակների աջակցությամբ ինտերնետային կապ հաստատվեց Արտաբույնքի աշակերտների և Ավստրալիայում գտնվող Հ. Թումանյանի անվան դպրոցի աշակերտների հետ: Երեխաները մեծ ոգևորվածությամբ շփվեցին միմյանց հետ՝ պայմանավորվածություն ձեռքբերելով շարունակել այդ շփումը և հաստատված կապը: Եղեգիս համայնքում Լեն Ուիքսի, Արմինե Հակոբյանի և Ավստրալիայի հայկական համայնքի աջակցությամբ տեղադրվել են զբոսաշրջային ճանապարհային նշաններ, Եղեգիս համայնքի մուտքի մոտ տնկվել են ծաղիկներ և ծառեր: